ՄԵԼԻՔԱԿԱՆ ԱՊԱՐԱՆՔՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ղուլյան Ա. (ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, Հայաստան)
artakbg@yandex.ru

Բանալի բառեր՝ մշակութային ժառանգություն, հուշարձան, մելիքություն, ճարտարապետություն, պալատ, ամրոց:

Հայաստանի արևելյան երկրամաս Արցախի պատմամշակութային ժառանգության մեջ իրենց լայն ժամանակագրական ու աշխարհագրական ընդգրկումով, գործառնական ու տիպաբանական բազմազանությամբ և պահպանվածությամբ առանձնակի տեղ ունեն ճարտարապետական հուշարձանները: Երկրամասում, հայոց պետականության գրեթե անընդմեջ անկախ ու կիսանկախ գոյության շնորհիվ, սկսած վաղ միջնադարից ստեղծվել են ինչպես քրիստոնեական պաշտամունքի բազմահազար կոթողներ՝ մատուռներ, եկեղեցիներ, վանական համալիրներ և խաչքարեր, այնպես էլ՝ աշխարհիկ ճարտարապետության մեծաթիվ հուշարձաններ՝ ամրոցներ, պալատներ, կամուրջներ, աղբյուրներ, բնակելի տներ, արտադրական կառույցներ: Առանձնահատուկ պատմաաշխարհագրական նախադրյալների պատճառով Արցախի ճարտարապետական ժառանգությունը հարուստ է հատկապես ամրոցաշինության և պալատաշինության հուշարձաններով, որոնց շարքում կարևոր տեղ ունեն երկրամասի միջնադարյան իշխանական տոհմիկ տների անմիջական ժառանգորդ մելիքների կառուցած ամրոցակերպ պալատները՝ ապարանքները: Մելիքական նստոց-կենտրոններում՝ բերդերում և ամրացված ավաններում, ապարանքները կառուցվել են Հայաստանի համար ծանրագույն պատմական դարաշրջանում՝ XV-XVIII դարերում: Մելիքական ապարանքների ավերակներ են

պահպանվել Ականաբերդում, Քաշաթաղում, Տողում, Գյուլիստանում, Հոռեկավանում, Ջրաբերդում, Մոխրաթաղում, Քաղաքատեղում, Գյուլաթաղում, Ավետարանոցում, Շուշիում, Թուխնակալում: Ապարանքներն ունեցել են պատմական աղբյուրներում վկայված շինարարական արձանագրություններ, որոնց մի մասը պահպանվել է: Պատմական վկայություններ կան մեզ չհասած այլ ապարանքների մասին: Մելիքական ապարանքներ են կառուցվել նաև Սյունիքում: Արցախի մելիքական ապարանքները դարաշրջանի բերդերի և վանք-ամրոցների կողքին մեծ դեր են խաղացել երկրամասի պաշտպանության գործում՝ ինչպես պարսկաթուրքական պատերազմների շրջանում, այնպես էլ հարևան խանությունների ոտնձգությունների դեմ մարտերում: Հատկապես մեծ է մելիքական ապարանքների դերը XVII-XVIII դարերի հայ ազգային-ազատագրական պայքարի գործում. ապարանքներն այդ պայքարի օջախներ էին՝ յուրօրինակ ամրացված «սղնախներ»: Այս մասին բազմաթիվ են վկայությունները դարաշրջանի հայ-ռուսական հարաբերությունների փաստաթղթերում:

Մելիքական ապարանքների ճարտարապետական հորինվածքներում միահյուսված են հայ հնագույն և Արցախ-Խաչենի իշխանական պալատաշինության, երկրամասի ամրոցաշինության և ժողովրդական բնակելի տան ճարտարապետության դարավոր ավանդույթները: Որպես ամբողջովին քարակերտ գլխատան համալիրներ՝ մելիքական ապարանքները միաժամանակ ունեն խիստ յուրահատուկ ճարտարապետական նկարագիր, բնական միջավայրին հմտորեն ներդաշնակված հորինվածքներ, զուսպ և ազդու հարդարանք: Մելիքական ապարանքներն Արցախի ճարտարապետական ժառանգությանը խիստ առանձնահատուկ և նրա անցյալի պատմական իրողություններն առարկայորեն պատկերավորող կարևորագույն վկայագրեր են՝ արժանի

ճանաչողության, հոգածության և անխաթար պահպանության ու վերականգնման:

THE ROLE AND IMPORTANCE OF MELIKS' PALACES IN THE HISTORICAL-CULTURAL HERITAGE OF ARTSAKH

Ghulyan A. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Arts, Armenia)